

ՀԱՏԱԳՈՐԾԱԿՈՒԹՅՈՒՆ



Հաջողված նախաձեռնության արդյունքում՝ նոր հուշագիր

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը և Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանն աշխատանքային հանդիպում են ունեցել, որի ընթացքում քննարկել են երկկողմ համագործակցության առաջվող մի շարք հարցեր:

Կողմերը գոհունակություն են հայտնել երկու գերատեսչությունների միջև վերջին տարիների ընթացքում ձևավորված փոխշահավետ համագործակցության վերաբերյալ՝ շեշտելով դրա ընդլայնման անհրաժեշտությունը: «Այժմ մենք նպատակ ունենք գալիք տարվանից մայրաքաղաքում նախաձեռնել և կազմակերպել գյուղատնտեսական տարբեր մթերքների օրեր, իսկ առաջիկայում նախատեսում ենք կազմակերպել նաև գինու փառատոն, որը կկրի ամենամյա բնույթ»,- նշել է նախարար Ս. Կարապետյանը: Նախարարը համոզմունք է հայտնել, որ համագործակցության շրջանակների ընդլայնումն ու ամրապնդումը կնպաստի գյուղացիների և քաղաքաբնակների միջև շփումների ակտիվացմանը, ինչն էլ կխթանի հայկական գյուղմթերքի արտադրանքի իրացման ծավալների ավելացմանը՝ մայրաքաղաքի բնակիչներին ապահովելով թարմ, բարձրորակ, մատչելի գներով գյուղատնտեսական մթերքով: Սերգո Կարապետյանը և Տարոն Մարգարյանը հատկապես կարևորել են համատեղ ջանքերով 2011 թվականից Երևան քաղաքում գյուղատնտեսական տոնավաճառների կազմակերպումը՝ որպես հաջողված նախաձեռնություն:

«Երևանում գյուղատնտեսական շուկաներ ունենալու նախաձեռնությունն իսկապես սպասված էր մայրաքաղաքի բնակիչների կողմից, ինչը ոչ միայն գյուղացիների համար առանց միջնորդի իրենց արտադրանքը վաճառելու լավ հնարավորություն է, այլև մայրաքաղաքի բնակչու-

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Համընդհանուր արդյունքների գնահատում

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Համաշխարհային բանկի պատվիրակությանը, որի կազմում էին ջրային պաշարների գծով ավագ մասնագետ, աշխատախմբի ղեկավար Վինսթոն Յուն, գյուղատնտեսական ոլորտի ավագ մասնագետ Արուսյակ Ալավերդյանը, սոցիալական զարգացման ավագ մասնագետ Սոֆյա Գեորգիևան, բնապահպանության հարցերով ավագ մասնագետ Դարեջան Կապանաձեն և այլ պատասխանատու անձինք: Հանդիպման նպատակն էր՝ քննարկել Հայաստանի ոռոգման համակարգի բարելավման ծրագրի ընթացքը:

Չորսամյա ծրագրով նախատեսվում է մինչև 2017 թվականը մեխանիկական ոռոգումը փոխարկել ինքնահոսի՝ Մեղրիում, Գեղարդալճում, Բաղրամյանում և Զաղցրաշենում չորս ինքնահոս համակարգի կառուցման միջոցով:

Հանդիպման սկզբում պատվիրակության անդամները տեղեկացրել են, որ առաքելության այցի հիմնական նպատակն է՝ գնահատել «Ոռոգման համակարգի բարելավման ծրագրի» համընդհանուր արդյունքները, ցուցանիշներն ու ազդեցությունները զարգացման արդյունքների տեսանկյունից և աջակցել ծրագրի իրականացման խոչընդոտների լուծմանը: Ողջունելով հյուրերին և գոհունակություն հայտնելով համագործակցության արդյունքներից՝ նախարար Սերգո Կարապետյանը իր խոսքում հատկապես կարևորել է ոռոգման համակարգում ջրի օգտագործման խնայողատար ռեժիմների կիրառումը, մասնավորապես, կաթիլային ոռոգման համակարգի ներդրումը, որն առաջարկել է ներառել առաջիկա ծրագրերում: Նախարարը նաև համոզմունք է հայտնել, որ ծրագրի ավարտին հանրապետության ոռոգման համակարգը էականորեն կբարելավվի: Նշելով, որ ծրագրի շրջանակներում ավարտին է մոտենում Մեղրիի ինքնահոս համակարգի կառուցումը՝ պարոն Յուն իր հերթին հավելել է, որ այն մեծապես կնպաստի ոռոգման համակարգի բարելավմանը՝ դրանով իսկ նպաստավոր պայմաններ ստեղծելով գյուղատնտեսական արտադրանքի ավելացման համար: Հանդիպմանը քննարկվել են ոլորտին վերաբերող մի շարք այլ հարցեր ևս:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Կառավարությունն ընդունել է որոշում՝ Շիրակի և Լոռու մարզերում 2014 և 2015 թվականներին կարկտահարությունից տուժած համայնքների, ՀՀ-ում 2010-2014թթ. ցորենի սերմնաբուծության և սերմնարտադրության զարգացման ծրագրի շրջանակում, 2013 և 2014 թվականներին հատկացված աշխանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուի դիմաց ձևավորված պարտքերի ներման մասին:

Նշված ժամանակահատվածում տեղացած ուժգին կարկտահարություններից տուժել են այդ մարզերի համայնքները: Հաշվի առնելով կարկտահարության պատճառած մեծ վնասները, որի արդյունքում հողօգտագործողները հայտնվել են ծանր կացության մեջ՝ անհրաժեշտություն է առաջացել վերը նշված հողօգտագործողների գումարների հետ վերադարձը ներել: «Մենք այս նախագծով օգնում ենք մեր գյուղացիներին, ովքեր տուժել են կարկտահարությունից: Սա ևս մեկ քայլ է կառավարության կողմից՝ աջակցելու մեր գյուղատնտեսության ոլորտին և մեր գյուղացիներին»,- նշել է գործադիրի ղեկավարը:

Կառավարության մեկ այլ որոշմամբ նախատեսվում է մարզերում քամու հետևանքների վերացման նպատակով, մարզպետարաններին հատկացնել շուրջ 902448.2 հազ. դրամ՝ մարզային և համայնքային ենթակառուցվածքի տակ գտնվող, ինչպես նաև բնակչության սեփականություն հանդիսացող գույքերին հասցված վնասները փոխհատուցելու նպատակով: Նշենք, որ նույններին ուժեղ քամիների հետևանքով զգալի վնասներ են հասցվել Արագածոտնի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերի մի շարք համայնքների բնակիչների, ինչպես նաև պետական և համայնքային նշանակության շինություններին: Հարցին արագ լուծում տալու համար Հովիվ Արախամյանն առաջարկել է կիրառել ոչ թե մրցութային, այլ բանակցային ընթացակարգ՝ առանց հայտարարության: Վարչապետն իր մտահոգությունն է հայտնել նաև խնդրի լուծման համար պահանջվող գումարի վերաբերյալ: «ՀՀ Նախագահի հետ քննարկել ենք այս հարցը և որոշում կայացրել, որ աջակցենք: Բայց դա պետք է լինի օբյեկտիվ, հիմնավոր»,- ընդգծել է վարչապետը և առաջարկել ստեղծել հանձնաժողով, աշխատանքային խմբեր, որոնք կլինեն մարզերում, համայնքներում և տեղում կճշտեն վնասի իրական չափերը:

ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբերի 13-ի դրությամբ, Հայաստանի Հանրապետությունից, ընդհանուր առմամբ, արդեն արտահանվել է 68400 տոննա թարմ պտուղ-բանջարեղեն՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 40 900 տոննայի դիմաց:

Այդ թվում՝ արտահանվել է 10 500 տոննա խաղող՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 5870 տոննայի դիմաց, 980 տոննա խնձոր՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 16 տոննայի դիմաց, 210 տոննա արքայա-նարինջ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 63 տոննայի դիմաց: Նոյեմբերի 13-ի դրությամբ, հանրապետությունից արտահանվել է նաև 10 100 տոննա կաղամբ և ծաղկակաղամբ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 1965 տոննայի դիմաց, 2770 տոննա բոբիլ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 750 տոննայի դիմաց, 1450 տոննա կանաչի՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 880 տոննայի դիմաց:

Հայկական թարմ պտուղ-բանջարեղենը հիմնականում արտահանվել է Ռուսաստանի Դաշնություն, Վրաստան, Դա-գախստան, Բելառուս, Իրանի Իսլամական Հանրապետություն:

Առաջավոր տեխնոլոգիաներ	Էջ 4
Սպառողական կոոպերատիվների զարգացման հետքերով	Էջ 5
Մասնագետի խորհուրդը	Էջ 7

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ

Հաջողված նախաձեռնության արդյունքում՝ նոր հուշագիր

1
յան է հնարավորություն է ընձեռում՝ առավել մատչելի գներով ձեռք բերելու գյուղացիական արտադրության մթերքը: Ելնելով մայրաքաղաքի բնակիչների պահանջարկից՝ Երևանի քաղաքապետարանը հատկացրել և պատրաստ է անհրաժեշտության դեպքում մայրաքաղաքի վարչական շրջաններում համապատասխան նոր տարածքներ ևս հատկացնել գյուղմթերքի շուկաների կազմակերպման համար»,- ընդգծել է քաղաքապետ Տարոն Մարգարյանը:

Հանդիպման շրջանակում, գյուղատնտեսության նախարարության և Երևանի քաղաքապետարանի միջև ագրոպարենային ոլորտի բնական գործունեությունն ու զարգացումն ապահովելու նպատակով, ստորագրվել է համագործակցության հուշագիր: Հուշագիրը նպատակաուղղված է Հայաստանի Հանրապետության տնտեսության, մասնավորապես, ագրոպարենային ոլորտի համամասնական ու կայուն զարգացմանը, հայրենական արտադրության լավագույն արտադրանքի գովազդմանը, ճանաչման ու սպառման մակարդակի ավելացմանը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխազդեցության համագործակցության ընդլայնմանը: Հանդիպման ավարտին Սերգո Կարապետյանը Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանին պարգևատրել է ոսկե մեդալով:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Անկալվում է ամերիկյան կողմի աջակցությունը

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը հանդիպել է ԱՄՆ ՄԶԳ փոխտնօրենի տեղակալ Ջոնաթան Կաջի հետ: Հանդիպմանը ներկա էին նաև ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ռիչարդ Միլսը և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության հայաստանյան առաքելության տնօրեն Քարեն Հիլարդը:



«Ընթացիկ տարում ՀՀ գյուղատնտեսության ոլորտում գրանցվել է դրական տեղաշարժ, ինչին նպաստել են ոչ միայն եղանակային բարենպաստ պայմանները, այլև պետական աջակցության և միջազգային կառույցների օժանդակությամբ իրականացվող ծրագրերը», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը: Ընդգծելով, որ հատկապես վերջին տարիների ընթացքում, արդյունավետ համագործակցություն է ձևավորվել գյուղատնտեսության նախարարության, ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան և միջազգային կառույցների միջև՝ նախարարը վստահություն է հայտնել, որ այդ շրջանակում իրականացվող համատեղ ծրագրերը կկրեն շարունակական բնույթ:

Հանդիպման ընթացքում նախարարը հանգամանորեն ներկայացրել է ՀՀ-ում գյուղատնտեսության ոլորտի ներկա վիճակը և գերակա ուղղությունները: Անդրադառնալով ոլորտի առաջնային լուծում պահանջող խնդիրներին՝ նախարարը մասնավորապես մատնանշել է գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման և կենդանիների համարակալման ու հաշվառման իրականացման կարևորությունը, որը կնպաստի բնակչությանը անվտանգ սննդամթերքով ապահովմանը:

Անդրադարձ է կատարվել նաև հակակարկտային ցանցերի ներդրման, տոհմային գործի բարելավման և պտղատու ինտենսիվ նոր այգիների ստեղծման հարցերին: Ընդգծելով երկրում ջրային ռեսուրսների կառավարման և արդյունավետ օգտագործման կարևորությունը՝ նախարարը անհրաժեշտ է համարել ձկնաբուծության բնագավառում ջրի խնայողատար ռեժիմով նորագույն տեխնոլոգիաների, իսկ ոռոգման բնագավառում՝ կաթիլային համակարգերի ներդրումը: Նշված ծրագրերի իրագործման համար ակնկալվում է ամերիկյան կողմի աջակցությունը:

Հանդիպման ընթացքում ամերիկյան կողմի ներկայացուցիչները բարձր են գնահատել գյուղատնտեսության նախարարության հետ համագործակցությունն ու համատեղ ծրագրերի արդյունավետությունը:

Չրույցի ընթացքում կողմերը քննարկել են ոլորտին վերաբերող այլ հարցեր:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՀՀ գյուղատնտեսության նախարարը հանդիպել է Ռոն Ալպ ռեգիոնալ խորհրդի պատվիրակության հետ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է Ֆրանսիայի Ռոն Ալպ ռեգիոնալ խորհրդի պատվիրակությանը, որի կազմում էին փոխնախագահ Էդուարդ Սիմոնյանը, Եվրոպայի և միջազգային հարաբերությունների բաժնի տնօրեն Ռաշել Հաաբը և հայաստանյան ներկայացուցիչ Անահիտ Դավթյանը: Հանդիպմանը ներկա էր նաև Հայաստանի համայնքների միության նախագահ Էմին Երիցյանը:

Ողջունելով հյուրերին՝ նախարար Սերգո Կարապետյանը բարձր է գնահատել խորհրդի կողմից Հայաստանում իրականացվող ծրագրերը, ինչպես նաև Հայաստանի համայնքների միության հետ համագործակցությունը: «Վերջին տարիներին Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում գրանցվել է զգալի առաջընթաց, ինչին մեծապես նպաստել են նաև խորհրդի կողմից իրականացվող ծրագրերը: Այնուամենայնիվ, դեռևս առկա են մի շարք խնդիրներ, որոնք առաջիկայում լուծման կարիք ունեն», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը: Ոլորտի առաջնահերթ խնդիրների թվում նախարարը մասնավորապես առանձնացրել է պտուղ-բանջարեղենի, կաթի և մսի վերամշակման արտադրամասերի, սառնարանային տնտեսությունների, չորանոցների կառուցման, գյուղմթերքի շուկայահանման և իրացման, ինչպես նաև խորհրդատվական ծառայությունների հզորացման հարցերը: Նախարարն կարևորել է նաև պանրի արտադրատեսակների դիվերսիֆիկացման անհրաժեշտությունը, ինչը թույլ կտա տեղական արտադրանքն արտահանել Եվրասիական տնտեսական միության լայնածավալ շուկա:



Անդրադառնալով Հայաստանի գինեգործությանը՝ նախարար Սերգո Կարապետյանը գոհուհույնով նշել է, որ այս ճյուղը ևս վերջին շրջանում մեր երկրում զարգացման միտում ունի, սակայն դեռևս արդիական են հայ մասնագետների վերապատրաստման և նորագույն տեխնոլոգիաների ներդրման հարցերը, որոնց առնչությամբ հայկական կողմն ակնկալում է խորհրդի աջակցությունը: Վերոնշյալ խնդիրներին լուծում տալու նպատակով, նախարար Սերգո Կարապետյանը պատվիրակության անդամներին առաջարկել է քննարկել դրանք իրենց առաջիկա ծրագրերում ընդգրկելու հնարավորությունը: Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև օրգանական գյուղատնտեսության զարգացմանն առնչվող հարցեր: Պատվիրակության ղեկավար Էդուարդ Սիմոնյանն իր հերթին հավաստիացրել է, որ խորհուրդը կշարունակի աջակցություն ցուցաբերել Հայաստանին գյուղատնտեսության ոլորտի զարգացման նպատակով:

ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Մասնակցություն համաքաղաքային ծառատունկին

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի և համակարգի կառույցների աշխատակիցների հետ միասին, Երևանում մասնակցել է համաքաղաքային շաբաթօրյակին և ծառատունկին:



Կազմակերպված ծառատունկի համար «Հայանտառ» ՊՈԱԿ-ը Նոյեմբերյանի անտառտնտեսության տնկարանից Երևանի քաղաքապետարանին հատկացրել է շուրջ 5000 տարբեր ծառատեսակների տնկիներ: Նախարարության աշխատակիցները ծառեր են տնկել մայրաքաղաքի Հաղթանակ զբոսայգու և Նոր Նորք համայնքի տարածքներում:

Այնուհետև նախարար Սերգո Կարապետյանն այցելել է Կասյան փողոցին հարող հրապարակում գտնվող գյուղատնտեսական տոնավաճառ, որում իրենց արտադրանքն են ներկայացրել 150 գյուղացիական տնտեսություններ: Նախարարը շրջել է տոնավաճառի տաղավարներով և գրուցել գյուղացիների հետ:

ՈՒՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը տեղեկացնում է

ՀՀ գյուղատնտեսության նախարարության մասնագետների կողմից հանրապետության մարզերում իրականացված աշխատանքի մոնիտորինգի արդյունքում պարզվել է, որ մի շարք համայնքների հողատարածքներում ակտիվացել է կրծողների տարածումն ու զարգացումը: Անհրաժեշտ պայքարի միջոցառումներ չիրականացնելու դեպքում, ձմռան ամիսներին կարող են լրջորեն վնասվել պտղատու և խաղողի այգիները, ինչպես նաև աշխատանքային մշակաբույսերի ցանքերը:

Հնարավոր վնասները կանխելու և գյուղացիական տնտեսություններին աջակցելու նպատակով, գյուղատնտեսության նախարարությունն իրականացնում է կրծողների դեմ լայնածավալ պայքարի միջոցառումների ծրագիր: Բոլոր այն հողօգտագործողներին, որոնց հողատարածքներում արձանագրվել է միջին և բարձր վարակվածություն, անհատույց կտրամադրվի անհրաժեշտ քանակությամբ «Ռոդիֆակում Ս» տեսակի թունաքիմիկատ և օգտագործման վերաբերյալ համապատասխան խորհրդատվական թերթիկներ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը հորդորում է հողօգտագործողներին՝ հետևել մասնագետների խորհուրդներին ու ցուցումներին, սեղմ ժամկետում ավարտել պայքարի աշխատանքները՝ խստորեն պահպանելով անվտանգությանը ներկայացվող պահանջները:

Լրացուցիչ հարցերի դեպքում հողօգտագործողները կարող են դիմել գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների մասնագետներին: Անհրաժեշտության դեպքում ծրագիրը կշարունակվի նաև 2016 թվականին գարնանային պայքարի միջոցառումների կազմակերպման համար:

ԾՐԱԳՐԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Երկրի պարենային անվտանգության գերակայությունը, ագրարային ոլորտի առանձնահատկությունները, ինչպես նաև ծառայած խնդիրների մասշտաբներն ու հրատապությունը, գյուղական տարածքների զարգացման առաջնահերթություններն առավել կարևորում են գյուղատնտեսության ոլորտի զարգացումը: Ստեղծված իրավիճակում ՀՀ կառավարության կողմից նոր մոտեցումներ են ցուցաբերվում ագրարային ոլորտի զարգացման ուղղությամբ:

Գյուղատնտեսությունում տնտեսավարողների ջանքերի, կիրառվող պետական քաղաքականության արդյունքում, ոլորտում վերջին տարիներին ապահովվել է տնտեսական աճ: Այդ միտումը շարունակվել է նաև 2015 թվականին: Ընթացիկ տարվա հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով՝ ոլորտում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, արձանագրվել է 11.3 % տնտեսական աճ:

Տնտեսական աճի ապահովման հետ մեկտեղ, կարևորագույն ձեռքբերումներից է ցանքատարածությունների ավելացումը և արդյունքում՝ հողային ռեսուրսների նպատակային օգտագործման մակարդակի բարձրացումը: Միայն 2015 թվականին ցանքատարածություններն ավելացել են 18500 հեկտարով: Վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը 2015 թվականին կազմել է 78.6 %՝ 2010 թվականի 63.0 %-ի դիմաց: 2015 թվականին հանրապետության մարզերում գրանցվել է գյուղատնտեսության բոլոր ճյուղերի արտադրության ծավալների զգալի աճ, ընդ որում՝ հունվար-սեպտեմբերի տվյալներով՝ բուսաբուծությունում աճը կազմել է 15.0 %, իսկ անասնապահությունում՝ 4.1 %:

2016 թվականին շարունակվելու են հացահատիկային տնտեսության զարգացմանն ու հացահատիկային մշակաբույսերի ինքնաբավության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումները:

Բարձրորակ սերմերով ապահովվածության մակարդակի բարձրացումը հնարավորություն տվեց եքստենսիվ և ինտենսիվ գործունեության համադրմամբ էապես ավելացնել հացահատիկային մշակաբույսերի արտադրության ծավալները, մասնավորապես՝ օպերատիվ տվյալներով, 2015 թվականին նախորդ տարվա համեմատ հացահատիկային մշակաբույսերի ծավալներն ավելացնել են 6.7 %-ով, այդ թվում՝ ցորենինը՝ 8.8 %-ով:

Վերջին տարիներին զգալի աշխատանքներ են իրականացվել նաև շերմատնային տնտեսության զարգացման ուղղությամբ: Ներկայումս շերմատնների ընդհանուր տարածքը կազմում է 770 հա: Ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած շերմատները կազմում են 85 հա, առաջիկա ամիսներին Կոտայքի և Արարատի մարզերում կկառուցվեն արդիական տեխնոլոգիաներով հագեցած շերմատներ: Չգալիորեն ավելացել են շերմատնային տնտեսության արտադրանքի արտադրության և արտահանման ծավալները:

Բուսաբուծության ոլորտում արդիական տեխնոլոգիաների ներդրման հետ կապված առաջիկայում միջոցներ կծեռնարկվեն կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման, կարկտապաշտպան ցանցաշերտերի կիրառման և ինտենսիվ այգիների հիմնման ուղղությամբ: Անասնաբուծության խթանմանը նպաստել են վերջին տարիներին իրականացվող, գյուղատն-

տեսական կենդանիների տոհմային և մթերատու հատկանիշների բարելավմանն ուղղված միջոցառումները: Մասնավորապես, եվրոպական երկրներից հանրապետություն են ներկրվում տոհմային երինջներ: Ընթացիկ տարում ներկրվել է 257 գլուխ տոհմային երինջ, աշխատանքներ են տարվում առաջիկա ամիսներին ևս 453 գլուխ ներկրումների կազմակերպման համար: Անասնապահության ոլորտում գրանցված դրական արդյունքների հետ մեկտեղ, դեռևս ցածր է գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը, վերջինիս բարելավման նպատակով կընդլայնվեն արհեստական սերմավորման ծավալները: Անասնապահական մթերքների երաշխավորված ծավալների, անվ-



տանգ մթերքների արտադրության ապահովման համար իրականացվում են գյուղատնտեսական կենդանիների առավել վտանգավոր հիվանդությունների՝ 8 կանխարգելիչ և 2 ախտորոշիչ միջոցառումներ: Անասնապահության զարգացման համար առանձնակի կարևորվում են Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» առաջին և երկրորդ ծրագրերը: Նպատակն է՝ աջակցել անասնապահական ուղղվածություն ունեցող համայնքներին՝ հեռավաճ արտոնների անցանելիության ապահովման, ջրարբիացման, դեգրադացված արոտների վերականգնման, ինչպես նաև կաթի ընդունման և վերամշակման կարողությունների ստեղծման, անասնաբուժական և տոհմային աշխատանքների բարելավման և այլ միջոցներով: Ծրագրի առանցքային դրույթներից է գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծումը: Ընդհանուր առմամբ, ծրագիրը ընդգրկում է հանրապետության 8 մարզի 186 գյուղական համայնք, ծրագրում ներառված է 300.0 հազ. հեկտար արոտավայր, շուրջ 200.0 հազ. պայմանական գլուխ կենդանի, որը հանրապետության ընդհանուր գլխաքանակի շուրջ 30 տոկոսն է: Ծրագրի շրջանակներում 142 համայնքում հիմնադրվել են կոոպերատիվներ, անց է կացվել 184 կմ ջրագիծ, տեղակայվել է 229 հատ խմոց, կոոպերատիվներին տրամադրվել է 741 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում՝ 161 անիվավոր տրակտոր: Ծրագրի իրականացման արդյունքում, ընդգրկված համայնքներում խոշոր եղջերավորների կաթնատվությունը և քաշաճն ավելացել է 18 %-ով:

Վերջին տարիներին կարևորվում է վարկային ռեսուրսների մատչելիության մակարդակի բարձրացումը: Կշարունակվի գյուղացիական տնտեսություններին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը՝ 6 տոկոսային կետով:

Շարունակվելու են հողօգտագործողներին մատչելի գներով ագրոտական, ֆոսֆորական ու կալիումական պարարտանյութերի և դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրերը, որոնցով կբավարարվի բոլոր հողօգտագործողների պահանջարկն ամբողջությամբ: Առաջիկայում միջոցներ կծեռնարկվեն գյուղատնտեսական մթերքների իրացման համակարգի բարելավմանն ու կատարելագործման, մասնավորապես՝ գյուղատնտեսական մթերքներ արտադրողների և վերամշակողների պայմանագրային հարաբերությունների զարգացման ուղղությամբ: Կշարունակվի գյուղատնտեսությունում կոոպերատիվների ձևավորման խթանման և դրանց

գործունեության աջակցության գործընթացը, որում կարևորում ենք առաջիկայում «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի ընդունումը: Ջրային տնտեսության ոլորտի աշխատանքային արդյունավետության բարձրացման նպատակով, համակարգը թևակոխել է բարեփոխումների նոր փուլ, որն իր մեջ ներառում է խմելու ջրամատակարարման և ոռոգման համակարգերի ողջ սպեկտրը: Ոռոգման համակարգում ընթացիկ տարում.

* վերականգնվել է շուրջ 10 պոմպակայան, 37 խորջային հոր, մեծացել է ոռոգվող տարածքների մակերեսը,

* ընթացիկ տարում նախորդ տարվա նկատմամբ, 79 մլն մ³-ով պակաս ջրառի պարագայում, ոռոգման գործընթացի արդյունավետ կազմակերպման արդյունքում, ջրտուրքը դաշտում կազմել է 66.2 %՝ 2014թ.-ի 63 %-ի դիմաց,

* կարգավորվել է Սևանա լճից ջրառը: 2014 թվականին այն կազմել է շուրջ 270 մլն մ³: Ընթացիկ տարում սահմանվել է ջրբացթողման միջին 170 մլն մ³ չափաքանակ:

Առաջնահերթություն է տրվում ջրամբարաշինությանը: Ընթացքի մեջ

են Կապսի, Մաստարայի, Եղվարդի, Վեդու ջրամբարների վերակառուցման և կառուցման նախապատրաստական աշխատանքները: Նախապատրաստվող ծրագրի մեջ են ներառված նաև Հարթավանի, Ելփինի և Խաչիկի փոքր ջրամբարները: Ջրամբարաշինության ռազմավարության հեռահար նպատակն է՝ մինչև 2025 թվականը կրկնապատկել ներկայումս ամբարվող ջրի ծավալը:

Գյուղի և գյուղատնտեսության զարգացման համար կարևորվում է «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակի» կողմից իրագործվող «Գյուղական կարողությունների ստեղծման» վարկային ծրագիրը, որի շրջանակներում Տավուշի, Վայոց ձորի և Արագածոտնի մարզերում հիմնվել են շուրջ 80 հա ինտենսիվ այգիներ: 2016 թվականին աշխատանքները կուղղվեն հիմնված այգիներում արդիական տեխնոլոգիաների, մասնավորապես՝ կաթիլային ոռոգման համակարգերի, հակակարկտային ցանցերի, ցրտահարությունից պաշտպանող համակարգերի ներդրմանը, արդյունքում ցուցադրական այգիների ստեղծմանը: Ծրագրի շրջանակներում 90 համայնքի գյուղական ենթակառուցվածքներում կատարվել են հետևյալ աշխատանքները՝ 51 համայնքում՝ 616 կմ գազաֆիկացման, 25-ում՝ 284 կմ ջրամատակարարման և 14-ում՝ 1400 հեկտարի վրա ոռոգման համակարգերի բարելավման աշխատանքներ:

2016 թվականին մեկնարկելու է «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագիրը», որի շրջանակում աջակցություն է ցուցաբերվելու գյուղական ֆինանսավորման ոլորտի զարգացմանը. տրվելու են գյուղատնտեսական վարկեր փոքր տնտեսություն վարողներին: Ներդրումներ են կատարվելու ջրամատակարարման և ոռոգման համակարգերի բարելավման ուղղությամբ: Այսպիսով՝ հակիրճ ներկայացվեցին գյուղատնտեսության համար նախատեսված առաջնահերթ ծրագրային ուղղությունները, որոնց իրականացումը կնպաստի ոլորտի մրցունակության և արդյունավետության բարձրացմանը:

ԿԵՆՍԱՎԱՌԵԼԱՆՅՈՒԹ

ԳԻՆՈՒ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻՑ



Աղելաիդայի (Ավստրալիա) համալսարանի գիտնականները, ովքեր արդեն եգիպտացորենի չորացած ցորեններում և փայտանյութում պարունակվող ցելյուլոզից կենսավառելիքի ստացման փորձ ունեն, այժմ այն ստանում են նաև գինեգործության արտադրական թափոններից:

Այսինքն՝ լրացուցիչ կենսավառելիք կարելի է ստանալ առանց ցանքատարածություն զբաղեցնելու և մթերատու մշակաբույսերին մրցակցություն կազմելու: Բնական թափոնները 31-54 % ածխածին են պարունակում, որի 47-80 %-ը ջրում լուծելի են, ինչը կնպաստի պարզ տեխնոլոգիական սխեմաներ կիրառելու համար:

Մեկ տոննա թափոնից կարելի է ստանալ մինչև 400 լիտր կենսաէթանոլ՝ կիրառելով թթուներ և ֆերմենտային պատրաստուկներ: Առանց թթուների կիրառման, ավելի մեղմ պայմաններում, թափոնի նույն քանակից ստացվում է 270 լիտր կենսաէթանոլ: Այդ դեպքում մնացած զանգվածը կարելի է օգտագործել որպես անասնակեր կամ պարարտանյութ:

Ընդամենը քառորդ դար առաջ, ՀԳԱ Բնապահպանության ինստիտուտում, Բորիս Ավագյանի գլխավորությամբ, ավարտվեց խաղողի թափոններից մի շարք արժեքավոր նյութերի ստացման տեխնոլոգիայի մշակումը: Այդ երկու տեխնոլոգիաների համալիր կիրառումը շատ խոստումնալից կարող է լինել երկրում՝ նորից թափ հավաքող խաղողագործության զարգացման համար:

Վ.Հ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

Շինարարական աշխատանքներ

Մրցույթի ծածկագիր՝ CARD-T005/PRP/11/15 20 նոյեմբերի, 2015թ.

1. «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամը, (CARD) ԱՄՆ ՄՉԳ-ի (USAID) կողմից ֆինանսավորվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների զարգացման» ծրագրի իրականացման շրջանակներում, հայտարարում է մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագածավան համայնքի, Հոկտեմբերյան խճուղի 72/3 հողամաս հասցեում գտնվող, «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամին կառուցապատման իրավունքով պատկանող հողատարածքում կատարելու շինարարական աշխատանքներ Արագածավանի Գյուղատնտեսական և Անասնաբուժական Սպասարկման Կենտրոնի շենքի արտաքին կոմունիկացիաներ կառուցելու համար (CARD-T005/PRP/11/15):
2. «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամը (CARD) հրավիրում է բոլոր իրավասու շինարարական կազմակերպություններին՝ մասնակցելու Հայաստանի Հանրապետության Արագածավան համայնքում կառուցվող Արագածավանի գյուղատնտեսական և անասնաբուժական սպասարկման կենտրոնի շենքի արտաքին կոմունիկացիաներ կառուցելու (CARD-T005/PRP/11/15) մրցույթին:
3. Մրցույթին կարող են մասնակցել միայն այն կազմակերպությունները, որոնց վերջին 2 տարվա շինարարական աշխատանքների ընդհանուր գումարը ոչ պակաս է քան 50,000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ և իրականացրել են շինարարական աշխատանքներ, միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում:
4. Մրցութային փաթեթները կարելի է ձեռք բերել CARD-ՎՍԻ ներկայիս գրասենյակից՝ մինչև 2015թ նոյեմբերի 30-ը, ժամը 16:00 հետևյալ հասցեով՝ ՀՀ ք. Երևան, Ազատության 1/21-40, Հեռ.՝ 374 60 440 550
5. Շահագրգիռ կազմակերպությունները մրցութային փաթեթները ստանալու համար պետք է ներկայացնեն շինարարական աշխատանքների կատարման համապատասխան արտոնագրերի պատճենները և պետ ռեգիստրում գրանցման վկայականի պատճեն:
6. Հայտերը պետք է ուժի մեջ մնան բացման օրվանից 60 օրվա ընթացքում և ներկայացվեն կնքված փակ ծրարների մեջ մինչև 2015թ. դեկտեմբերի 3-ը, ժամը 12:00 հետևյալ հասցեով՝ ՀՀ ք. Երևան, Ազատության 1/21-40, Հեռ.՝ 374 60 440 550
7. Նշված ժամկետից հետո ստացված հայտերը չեն մասնակցելու հայտերի բացմանը, որը տեղի կունենա 2015թ. դեկտեմբերի 3-ին, ժամը 16:00-ին «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամի գրասենյակում՝ մասնակցելու ցանկություն հայտնած հայտատուների ներկայությամբ:

Հարգելի քաղաքացիներ,

Տեղեկացնում ենք, որ Գյուղատնտեսական հանրագիտարանն ձեռք բերելու համար կարող եք զանգահարել **011 23 14 30** հեռախոսահամարով:
 Հանրագիտարաններն առկա են նաև Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոններում, ինչպես նաև՝ «Նոյան Տապան» և «Բուկի-նիսպ» գրասենյակում:



ՀԵՏԱԲՈՒՔԻՆ Է...

ԲՈՂԿ

Տարեկան բողկի օգտակարության մասին, ըստ առասպելի՝ կարծիք է հայտնել ինքը՝ Ապոլոնը.
 «Բողկն այնքան ոսկի արծե, որքան ինքը կշռում է»:



Բողկը կաղամբազգիների ընտանիքի միամյա և երկամյա արմատապտղավոր բանջարաբույս է: Հայտնի է շուրջ 8-10 տեսակ: Ծաղկաբույլը ողկույզ է, ծաղիկները՝ սպիտակ, վարդագույն, մանուշակագույն: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին: Պարունակում են վիտամիններ (C, B), կալիումի, կալցիումի, երկաթի և ֆոսֆորի աղեր (գերակշռում են հիմնային աղերը), սպիտակուցներ, ֆերմենտներ, գլիկոզիդներ և այլն:

Հանդիպում է Տավուշի, Գեղարքունիքի մարզերում (մինչև վերին լեռնային գոտի), Երևանի շրջակայքում: Մշակության մեջ ՀՀ գրեթե բոլոր մարզերում տարածված է բողկ մշակովին կամ ընտանին, որն ունի 2 տարատեսակ՝ տարեկան բողկը և ամսաբողկը:

Հուլիսի բժիշկները տարեկան բողկով բուժում էին աչքի և մարսողական օրգանների հիվանդությունները, իսկ հայտնի պատմաբան Պլինիոսը և գիտնական Գալենը տարեկան բողկը խորհուրդ էին տալիս՝ որպես ախորժակը գրգռող ուտեստ, երկվամսերի հիվանդությունները բուժող միջոց: Աշխարհում հայտնի տարեկան բողկի մշակովի լավագույն տեսակներից մեկը «Արտաշատի վարդագույնն» է:

Բաղի անվանումը եկել է լատիներեն radix բառից, որը թարգմանաբար նշանակում է արմատ: Հայրենիքը Կենտրոնական Ասիան է: Այնտեղ բողկը հայտնի է եղել դեռևս հնագույն ժամանակներից: Այն տարածված է եղել նաև Հին Ճապոնիայում, Հին Հունաստանում, Հին Եգիպտոսում: Հին Հռոմում ծմեռային սորտատեսակ բողկը կերել են մեղրի, քաջախի և աղի հետ: Եվրոպայում սկսեցել են մշակել 16-րդ դարից: Դրա համը առաջին անգամ զգացել են ու իրենց ուտեստների մեջ օգտագործել են ֆրանսիական խոհարարները: Այժմ այն աճեցվում է ամբողջ աշխարհում: Արդյունավետ, օգտակար և հաճելի. այս ամենը կարելի է ասել սովորական բողկի մասին և հենց այս հատկանիշներն են, որոնց շնորհիվ բողկն ի հայտ գալու օրվանից մինչ այսօր համարվում է ամենօգտակարներից մեկը:

Բողկի օգտակար և փասակար հատկությունները

Բողկը վաղուց ի վեր օգտագործվում է հայկական ժողովրդական բժշկության մեջ, ինչի մասին բավականին ամփոփ տեղեկություններ է փոխանցել նաև Ա. Ամասիացին. «Հյուլը մաքրում է աչքը և փայլ է տալիս: Իսկ սերմերը բացում են ձայնը, բայց նպաստում են նաև մազերի սպիտակելուն: Եթե բողկն ուտեն ճաշելուց հետո, կնպաստի մարսողությանը, իսկ ճաշից առաջ ուտելը վնաս է: Բողկի հյութի և մեղրի խառնուրդը բուժում է չարորակ խոցերը: Բողկի հյութը գինու հետ կօզնի օձի խայթոցի դեպքում:

Բողկն ունի միզամուղ, լեղամուղ, խորխաբեր, ցավամոքիչ, հանգստացնող հատկություն: Բարձրացնում է դիմադրողականությունը, կանխում ջրակծկումները, կանխարգելում ուռուցքների առաջացումը: Կորեացիներն օգտագործում են սերմերը՝ ստամոքսաբորբի, վատ մարսողության, քրոնիկ բրոնխիտի, բրոնխների ալթերացիայի դեպքում, արմատապտուղը՝ այտուցի, շաքարային դիաբետի բուժման դեպքում, հյութի ջրային լուծույթը՝ ստոմատիտի դեպքում, տրորած տերևը՝ դնում են կապտուկներին: Չի կարելի օգտագործել սիրտ-անոթային հիվանդությունների, բարձր թթվայնությամբ ստամոքսաբորբի, կոլիտի, ստամոքսի, 12-մատնյա աղիի խոցի դեպքում:

Բողկի վնասակար հատկանիշները չեզոքացնում է մեղրը: Եթե բողկի հյութը եփեն վարդի հյութի հետ և կաթեցնեն ականջի մեջ, կբուժի խլությունը: Իր սննդարարությամբ և բուժիչ հատկություններով լավագույնը սև բողկն է, որն աչքի է ընկնում կալիումի առատությամբ (1200 մգ՝ 100 գ հումքի մեջ, սպիտակի մեջ՝ 357 մգ է): ՀՀ-ում մշակվում է «Սև կլոր» տեսակը:

Թարգմանությունը՝ Լիլիթ Գասպարյանի

ՇԱՐՈՒՆԱՎՈՒՄ Է ԱԳՐԱ Երատու

2015 թ. ԲԵՏԵՆՈՐԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԱԳՐՈՂԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագրի

1 փարվա գինը՝ 3960 դրամ	1 փարվա գինը՝ 8100 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ	6 ամսվանը՝ 4050 դրամ
1 համարինը՝ 120 դրամ	1 համարինը՝ 1350 դրամ

Բաժանորդագրությունը իրականացնում են՝ Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները, «Հայփոստ», «Հայմամուլ», «Պրես-Արարատ» կազմակերպությունները